

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-124>

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի
պատասխանատու, Երևանի «Գլաժոր» համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

MARTIN MANUKYAN

*Responsible for monitoring the work of the
Office of the Public Defender
of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Lecturer at the Department of Jurisprudence
of the Yerevan University “Gladzor”,
Candidate of Legal Sciences*

МАРТИН МАНУКЯН

*Ответственный за мониторинг работы
Аппарата Народного Защитника
Палаты адвокатов Республики Армения,
преподаватель кафедры юриспруденции
Ереванского университета «Гладзор»,
кандидат юридических наук*

**ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՆ (մաս I)**

**THE PRACTICE OF DEVELOPMENT OF WESTERN EUROPEAN
PARLIAMENTARISM (part I)**

**ПРАКТИКА РАЗВИТИЯ ЗАПАДНОЕВРОПЕЙСКОГО
ПАРЛАМЕНТАРИЗМА (часть I)**

Ներածություն

Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի հիմնական մոդելների և դրանց զարգացման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխանության կառուցվածքը յուրաքանչյուր դեպքում ունի իր առանձնահատկությունները՝ հարմարեցված տվյալ երկրի սոցիալ-քաղաքա-

կան պայմաններին: Այդուհանդերձ, պետք է նշել, որ պառլամենտարիզը, ընդհանուր առմամբ, հիմնվում է սահմանադրական այն դրույթների վրա, որոնք ամրագրում են իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների մեխանիզմները, ինչպես նաև քաղաքական բազմազանությունը և կուսակցությունների գործունեության ազատությունը:

Միևնույն ժամանակ, այս ինստիտուտը չի կարող արդյունավետ գործել, եթե զարգացած չեն սոցիալական կառուցվածքը և քաղաքացիական հասարակությունը, որոնք ձևավորվում են բարձր իրավաքաղաքական մշակույթ ունեցող բնակչության հիման վրա: Պառլամենտը խորհրդանշում և ներկայացնում է ազգ-պետության (այսինքն՝ ազգապետության) քաղաքական կամքը. այն ընդունում է պետության ղեկավարի երդումը, արտահայտում է ժողովրդական վստահությունը կառավարությանը, փոխանցում է նրան լիազորություններ, ինչպես նաև հանդես է գալիս հայտարարություններով՝ միջազգային և ներքաղաքական հարցերի վերաբերյալ:

Հոդվածի հեղինակի դիտարկմամբ՝ ներկայացուցչական և գործադիր իշխանությունների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների առանձնահատկություններն են հիմք հանդիսանում պառլամենտների դասակարգման համար՝ որպես գերիշխող, ինքնավար, սահմանափակ իրավասությամբ կամ գործադիրին ենթակա խորհրդարաններ:

Հիմնական հետազոտություն

Մեծ Բրիտանիայի համար ավանդական է «խորհրդարանի գերակայության» սկզբունքը: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում այդ սկզբունքը ենթարկվել է որոշ ձևափոխությունների, և առաջ են քաշվել իշխանության ուժեղ գործադիր թևի վերաբերյալ նոր հայեցակարգեր: Մասնավորապես՝ թեև Մեծ Բրիտանիայի կառավարությունը ձևավորվում և վերահսկվում է խորհրդարանի կողմից, այնուամենայնիվ, պետական համակարգում հաճախ զբաղեցնում է գերակա դիրք:

Եթե խորհրդարանում ապահովվում է մեկ կուսակցության տիրապետությունը և այն միանձնյա է ձևավորում իր կաբինետը, ապա փաստացի կառավարությունն առաջին տեղն է զբաղեցնում պետական համակարգում: Արդյունքում՝ կաբինետը սկսում իր կամքը թելադրել խորհրդարանին, ինչը բնորոշ է Մեծ Բրիտանիային, որտեղ պետական վարչակարգը արդի փուլում ճիշտ կլինի բնութագրել որպես կաբինետային կառավարում, կամ մինիստերիալիզմ, այլ ոչ թե պառլամենտարիզմ: Սակայն վերջին տարիների իրադարձությունները ժամանակակից Անգլիայում որոշակի իմաստով հերքում են նշյալ տեսակետը: Այսպես, օրինակ, կարևորագույն քաղաքական որոշումներ մշակելու գործընթացում լեյբորիստ պատգամավորներն ակտիվորեն ընդդիմանում էին իրենց առաջադրած նախարարների կաբինետի ղեկավարին՝ Թոնի Բլերին: Ավելին, որոշ հարցերում նրանք կարողանում են անցկացնել իրենց դիրքորոշումը: Կառավարությունը, հաշվի առնելով խորհրդարանականների ցանկությունները, զիջումների է գնում¹:

Արևմտաեվրոպական պետությունների մեծ մասը դասվում է խորհրդարանական կառավարման մոդելին, ԱՄՆ-ում ամրագրված է նախագահական հանրապետությունը: Այդ պետության քաղաքական համակարգի բնութագրական գիծն իշխանության հստակ բաժանումն է օրենսդիրի, գործադիրի և դատականի, ինչպես նաև երկկուսակցական համակարգը: ԱՄՆ-ի նախագահը Սահմանադրության երաշխավորն է, պետության գլխավոր ներկայացուցիչն այլ երկրների հետ հարաբերություններում: Իբրև գործադիր իշխանության

¹ Крылова Н.С., Британский парламент// очерки парламентского права, М., 1993, с. 41-47.

ղեկավար՝ նա ձևավորում է վարչակազմ (կառավարություն), նշանակում է բարձրագույն պաշտոնատար անձանց, դաշնային դատարանի դատավորներին և գլխավոր դատախազին, ղեկավարում պետական ապարատի ամբողջ գործունեությունը: Նախագահն իրավունք ունի վետո կիրառելու Կոնգրեսի ընդունած որոշ օրինագծերի նկատմամբ: ԱՄՆ-ում պետության գլուխն ընտրվում է համընդհանուր ընտրություններով, սակայն, նրա թեկնածությունն առաջադրում է կուսակցությունը՝ իրականացնելով ակտիվ քարոզարշավ՝ ի պաշտպանություն իր թեկնածուի: ԱՄՆ-ում նախագահական կառավարմանը բնութագրական է նաև զսպումների և հակակշիռների մեխանիզմների առկայությունը, որոնք օժտում են իշխանության յուրաքանչյուր թևին՝ մյուսների գործողությունները վերահսկելու և նրանց վրա անմիջականորեն ազդելու իրավասությամբ և հնարավորությամբ: Մասնավորապես, ԱՄՆ Կոնգրեսն օժտված է նախագահի գործողությունները վերահսկելու իրավունքով՝ բյուջեն հաստատելիս, ինչը բացառապես օրենսդիր մարմնի իրավասությունների շրջանակում է: Նախագահն իր հերթին կարող է վետո դնել խորհրդարանի ընդունելիք օրենքների վրա: Գերագույն դատարանն իրավունք ունի Սահմանադրությանը հակասող ճանաչել Կոնգրեսի ընդունած և պետության ղեկավարի հավանությանն արժանացած օրենքները: ԱՄՆ օրենսդիր և ներկայացուցչական մարմինը կազմված է երկու պալատից՝ Սենատից և Ներկայացուցիչների պալատից: Խորհրդարանի վերին պալատի կազմում ընդգրկված են երկուական սենատոր յուրաքանչյուր նահանգից, որոնք ընտրվում են ուղիղ հավասար ընտրությամբ 6 տարի ժամկետով: Յուրաքանչյուր երկու տարին մեկ Սենատը թարմացվում է մեկ երրորդով: Ներկայացուցիչների պալատը (435 անդամ) ընտրվում է ուղիղ հավասար քվեարկությամբ ներկայացուցչական մեծամասնական համակարգով՝ 2 տարի ժամկետով: Սենատը կարող է չեղարկել կամ փոփոխել ներկայացուցիչների պալատի բերած ցանկացած օրինագիծ (բացառությամբ ֆինանսականների, որոնք կարող է առաջարկել միայն Ներկայացուցիչների պալատը); Վերին պալատը վավերացնում է նախագահի կնքած միջազգային պայմանագրերը և հաստատում է նրա նշանակումները:

ԱՄՆ Կոնգրեսը կարող է երկու պալատների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ուղղումներ (լրացումներ) կատարել, որոնց ուժի մեջ մտնելը պայմանավորված է նահանգների երեք չորրորդի կողմից վավերացմամբ: Օրենսդիր և ներկայացուցչական մարմինն իրավունք ունի հաստատելու կամ պաշտոնանկ անելու պաշտոնատար անձանց՝ ներառյալ անվստահություն հայտնելու նախագահին, պատերազմ հայտարարելու, հաստատելու արտասահմանում ամերիկյան զորքերի գտնվելու ժամկետները: Կարելի է հետևություն անել, որ ԱՄՆ-ի նախագահի քաղաքական ծրագիրը և նրա օրենսդրական նախաձեռնությունները կյանքի կոչելն անմիջականորեն կախված է բարձրագույն օրենսդիր մարմնի հետ նրա համագործակցության մակարդակից:

Դաշնային քաղաքական իշխանությունից զատ՝ զգալի դերակատարում ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց կառուցվածքն ու իրավասությունը սահմանվում է նահանգների օրենսդիր մարմինների կողմից: Յուրաքանչյուր նահանգում նահանգապետը, նահանգի լեգիսլատիվային (օրենսդիր մարմնի) անդամները, քաղաքապետերը ընտրվում են տեղի բնակչության կողմից և պատասխանատու են առաջին հերթին իրենց ընտրողների առջև: Նահանգների օրենսդիր մարմինները ներկայացված են երկպալատ ու միապալատ տարածաշրջանային խորհրդարաններով:

Այսպիսով, նախագահական և խորհրդարանական մոդելները համադրելիս կարելի է տեսնել հետևյալ տարբերությունները.

ա ԱՄՆ նախագահական համակարգում Նախագահն ու Կոնգրեսի կազմն ընտրվում

են առանձին ընտրություններով, մինչդեռ, խորհրդարանական կառավարման պայմաններում ընտրությունները միաժամանակ լուծում են խորհրդարանի և կառավարության ձևավորման հարցը, ինչպես նաև տարբեր կոալիցիաների ստեղծման հնարավորություն են ընձեռում,

բ. Խորհրդարանական կառավարման դեպքում խորհրդարանն է նշանակում կառավարությունը, և ինքն էլ կարող է ցրել այն: Ամերիկյան Կոնգրեսը սովորական պայմաններում չունի կառավարությունը ցրելու նման իրավունք: Այն չի կարող պաշտոնանկ անել նախագահին՝ Կոնգրեսում քաղաքական տարակարծությունների կամ մեծամասնության փոփոխության պատճառով: Միայն բացառիկ դեպքերում, երբ նախագահը մեղադրվում է հանցագործության մեջ, ներկայացուցչական մարմինը կարող է նրա առնչությամբ բողոք ներկայացնել Սենատ, և վերջինս կարող է զրկել նրան նախագահի պաշտոնից՝ ծայների երկու երրորդով,

գ. և հակառակը, ԱՄՆ նախագահը չի տիրապետում կարևորագույն կարգավորիչ միջոցների՝ Կոնգրեսի հետ հարաբերություններում: Նա չի կարող արձակել կոնգրեսը, ինչպես օրինակ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետը Համայնքերի պալատը, և նշանակել նոր ընտրություններ,

դ. և եթե Մեծ Բրիտանիայում՝ դասական խորհրդարանական կառավարմամբ երկրում, վարչապետը Համայնքների պալատի անդամ է, ապա ԱՄՆ Սահմանադրությունը բացառում է գործադիր պաշտոնի և պատգամավորական մանդատի համատեղումը: Նախագահն ու նրա կառավարության անդամները չեն կարող ընդգրկվել Կոնգրեսում (դրանով հանդերձ, փոխնախագահը միաժամանակ Սենատի նախագահն է),

ե. խորհրդարանական կառավարման ժամանակ գոյություն ունի առանձին գործադիր իշխանություն: Պետական ներկայացուցչական խնդիրներն իրականացնում է նախագահը կամ միապետը, իսկ իրական կառավարական իշխանությունը պատկանում է կառավարության ղեկավարին՝ վարչապետին կամ կանցլերին: ԱՄՆ-ում ընդհակառակը՝ նախագահը միավորում է պետության գլխ և կառավարության ղեկավարի գործառույթները,

զ. ապա ԱՄՆ նախագահը ֆորմալ առումով (բայց ոչ սահմանադրական տիրույթում) զուրկ է օրենսդրական նախաձեռնության հնարավորությունից: Նա միայն իրավունք ունի վետո դնելու Կոնգրեսի որոշումների վրա: Նախագահի վետոն կարող է հաղթահարվել ծայների երկու երրորդով: Խորհրդարանական կառավարման դեպքում կառավարությունը ունի օրենսդրական նախաձեռնության հնարավորություն, և այն ունի վետոյի լիակատար իրավունք (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում կամ ԳԴՀ-ում)՝ ներկայացված օրենքների նկատմամբ²:

Ամերիկյան և բրիտանական մոդելների վերլուծությունը ի ցույց է դնում այդ երկրների քաղաքական համակարգերի էական տարբերությունները, բայց միևնույն ժամանակ հաստատում դրանց պառլամենտարիզմի հիմնարար սկզբունքների գոյությունը, որոնք մենք մատնանշել էինք՝ որպես դրա ինստիտուցիոնալացման հիմնական չափանիշներ:

Արևմտյան ժողովրդավարությունների մեծ մասը դժվարությամբ կարելի է հարմարեցնել վերոհիշյալ երկու կառավարման մոդելներին՝ իրենց <<մաքուր>> տեսքով: Դա նշանակում է, որ պառլամենտարիզմն այդ երկրներում ունի իր յուրահատկությունները: Դրա հիման վրա կարելի է մատնանշել հաջորդ երկու կառավարման մոդելները: Առաջին տեսակին դասվում են կառավարման այն մոդելները, որոնցում նախագահը զգալիորեն ավելի մեծ

² Баренбойм Н.Д., Вето президента США - Советское государство и право. Москва, 1977, с. 34-36.

դեր ունի, քան խորհրդարանական մոդելում: Նմանօրինակ համակարգերում պետության նախագահն ընտրվում է ուղիղ ընտրություններով: Նա էականորեն ազդում է կառավարության ձևավորման, առանցքային պաշտոններում իր մարդկանց նշանակման վրա: Սակայն, կառավարությունը կախված է ոչ միայն նախագահից, այլև պատասխանատու է խորհրդարանի առջև, որը կարող է փոփոխել այն: Վայմարյան հանրապետության ժամանակներում ռայխսնախագահի իշխանությունը պայմանավորված էր ոչ այնքան պաշտոնով, որքան սահմանադրությամբ, սակայն, նա կախված էր առաջին հերթին, այն խորը քաղաքական հակասություններից, որոնք բնորոշ էին այդ ժամանակվա Գերմանիայի քաղաքական համակարգին:

Ֆրանսիայի Հանրապետությունում կիսանախագահական մոդելի յուրօրինակությունն այն է, որ 1958 թվականի Սահմանադրությամբ սահմանված է իշխանության ոչ թե երեք, ինչպես նախագահական կամ պառլամենտական ձևերում է ընդունված, այլ՝ չորս թևի գոյություն: Բացի օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններից՝ առանձնացված է նաև նախագահական իշխանությունը:

Ֆրանսիայում օրենսդիր իշխանությունն իրականացնում է երկպալատ խորհրդարանը, որը բաղկացած է Ազգային ժողովից և Սենատից (Ֆրանսիայի Սահմանադրություն, Հոդված 24): Սենատի անդամներն ընտրվում են անուղղակի ընտրություններով՝ ինը տարի ժամկետով՝ ներկայացնելով Ֆրանսիայի Հանրապետության կազմում գտնվող տարածքները: Յուրաքանչյուր երեք տարին մեկ Սենատը թարմացվում է իր կազմի մեկ երրորդի չափով:

Ազգային ժողովի պատգամավորները ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ համընդհանուր, հավասար, ուղիղ ընտրությունների միջոցով՝ մեծամասնական երկփուլ համակարգով: Երկրորդ փուլում պատգամավորները ընտրվում են հարաբերական մեծամասնությամբ:

Գործադիր իշխանության կազմավորումը Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության պայմաններում որոշակի յուրահատկություններ ունի՝ ի տարբերություն եվրոպական դասական խորհրդարանական պետությունների նորմերի և ավանդույթների:

Հանրապետության նախագահը, ըստ Ֆրանսիայի Սահմանադրության 8-րդ հոդվածի, նախ նշանակում է վարչապետին: Այնուհետև կառավարության ղեկավարը հանդես է գալիս կառավարության ծրագրով կամ ընդհանուր քաղաքականության վերաբերյալ հռչակագրով: Դրանից հետո վարչապետը Ազգային ժողովում բարձրացնում է կառավարության վստահության հարցը (Ֆրանսիայի Սահմանադրություն, Հոդված 49):

Խորհրդարանական կառավարման մոդելի երկրներում կառավարության ձևավորման ու գործունեության կարևորագույն պայմանը ներկայացուցչական մարմնի վստահությունը վայելելն է: Որպես կանոն, վերոնշյալ երկրներում վստահություն վայելելու ընթացակարգը կառավարության նշանակման անհրաժեշտ և պարտադիր պայմանն է: Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության սահմանադրության ինքնատիպությունն այն է, որ դրանում տեղ է գտել դրույթ լոկ կառավարությանը վստահություն հայտնելու հնարավորության մասին: Այսինքն՝ ինվեստիտուրան պարտադիր պայման չէ կառավարության աշխատանքը սկսելու համար: Ուշադրություն դարձնելով դրան՝ պետք է նկատել, որ Ֆրանսիայի 1958 թ. սահմանադրությունը ընդունվել է դրա հոգևոր հայր Շարլ դը Գոլի հակապառլամենտարիզմի ազդեցությամբ: Դը Գոլի օրոք օրենսդիր իշխանությունը վերածվել էր գործադիր իշխանության կցորդի: Սակայն, մեր կարծիքով, չի կարելի չնկատել, որ ներկայում Ֆրանսիայում քաղաքական վարչակարգը որոշ չափով փոփոխվել է: Այսպես, Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետությունում հաստատվել է այսպես կոչված «ռացիոնալիզացված պառլամենտարիզմի» մոդելը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ ժամանակակից Ֆրանսիայի քա-

դաքական համակարգում «կյանքի էկոչվել դասական ներկայացուցչության և ժողովրդի հետ ուղիղ խորհրդակցությունների համագործակցության գաղափարը»³:

Ֆրանսիական կիսանախագահական հանրապետության բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ նախագահի դերը զգալիորեն մեծացվում է վարչապետի նշանակման գործընթացում: Համաձայն 1958 թվականի Սահմանադրության՝ նախագահն ունի Ազգային ժողովը լուծարելու սահմանադրական իրավասություն այն դեպքում, երբ խորհրդարանը անվստահություն է հայտնում կառավարությանը:

Սակայն, միևնույն ժամանակ, պետության ղեկավարը չի կարող անտեսել ընտրողների կամքն ու քաղաքական ուժերի հարաբերակցությունը Ազգային ժողովում: Այս հանգամանքները սահմանափակում են նախագահի գործնական հնարավորությունները, և նա չի կարող առանց բացառության կիրառել իր սահմանադրական լիազորությունները:

Այս իրողությունը հստակ դրսևորվեց նախագահ Ֆրանսուա Միտերանի նախագահության տարիներին, երբ վերջինս ստիպված էր վարչապետի պաշտոնում նշանակել իր քաղաքական հակառակորդներին՝ Ժակ Շիրակին (1986 թ.) և Էդուար Բալադյուրին (1993 թ.), որոնց կուսակցությունները հաղթանակ էին տարել խորհրդարանական ընտրություններում:

Ֆրանսիական մոդելի և դասական խորհրդարանական համակարգերի միջև կարևոր սկզբունքային տարբերություններից մեկն այն է, որ Ֆրանսիայում անթույլատրելի է նախարարի պաշտոնը համատեղել պատգամավորական մանդատի հետ (Ֆրանսիայի Սահմանադրություն, հոդված 23): Այս դրույթը խորհրդարանը և կառավարությունը վերջնականապես տարանջատում է կազմավորման տեսանկյունից՝ խստորեն հետևելով իշխանությունների բաժանման սկզբունքին:

Այս դրույթի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորը նախարարի պաշտոն ստանալու դեպքում պարտավոր է մեկ ամսվա ընթացքում վայր դնել իր պատգամավորական մանդատը:

Այսպիսով՝ հարկ է արձանագրել, որ Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետությունում հաստատվել է պետական այնպիսի կարգ, որը ենթադրում է խորհրդարանի բացարձակ իշխանության թուլացում՝ որոշ չափով նաև իշխանության օրենսդիր ու գործադիր թևերի միջև առարկայական իրավասության խիստ տարանջատում: Այս մոդելի առնչությամբ առավելապես կիրառելի էդուալիստական կամ «ռացիոնալիզացված պառլամենտարիզմ» հասկացությունը, քանի որ այստեղ կառավարությունը պատասխանատու է թե՛ խորհրդարանի և թե՛ նախագահի առջև:

Ֆրանսիայի նախկին վարչապետ Միշել Ռոկարը, խոսելով Հինգերորդ հանրապետության (ներկայիս Ֆրանսիայի) խորհրդարանի դերի մասին, նշում է, որ այդ դերը, իհարկե, «նվազել» է: Առաջներում խորհրդարանը հրատարակում էր օրենքներ և վերահսկում էր գործադիր իշխանությանը: Ներկայումս ֆրանսիական խորհրդարանը և Անգլիայի, Գերմանիայի, Իսպանիայի, սկանդինավյան երկրների խորհրդարանները գործում են այլ վիճակում: «Նրանցից յուրաքանչյուրում,- ընդգծում է Մ.Ռոկարը,- պետական համակարգում առաջնությունը պատկանում է գործադիր իշխանությանը, խորհրդարանական մեծամասնությունը ոչ այնքան վերահսկում է կառավարությանը, որքան այն պաշտպանում է: Խորհրդարանը ավելի շուտ ընդունում է իրեն առաջարկվող օրենքները, քան թե հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնություններով»⁴:

³ Кругослов М.А., Ковлер.А.И., Парламентское право Франции. - Очерки парламентского права. - М., 1993, с. 45-56.

⁴ Рокар М., Трудиться с душой. - М., 1990, с. 264-265.

Շվեյցարիայում Սահմանադրությունը ներառում է Ա՝ նախագահական, Ա՝ խորհրդարանական կառավարման տարրեր: Խորհրդարանն ու կառավարությունը չեն կարող արձակվել Նախագահի կողմից: Իր հերթին կառավարությունը չունի խորհրդարանի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք: Կառավարական պաշտոնն ու պատգամավորական մանդատն անհամատեղելի են: Կառավարությունը կոլեգիալ մարմին է, ինչպես նաև, հակառակ նախագահական համակարգի, ունի օրենսդրական նախաձեռնության ֆորմալ հնարավորություն:

Շվեյցարիայի խորհրդարանը՝ Դաշնային ժողովը, կազմված է երկու պալատից: Ստորին պալատը՝ Ազգային խորհուրդը ունի 200 պատգամավոր, որոնք ընտրվում են համընդհանուր ուղղակի ընտրություններով: Նման ընտրությունների ժամանակ ընտրատարածքները կենտրոններն են: Ազգային խորհրդի գործունեության ժամկետը 4 տարի է: Շվեյցարական խորհրդարանի ստորին պալատի անդամ կարող է ընտրվել ակտիվ ընտրական իրավունքով օժտված ցանկացած քաղաքացի, որը հոգևորական չէ: Կանտոնների խորհուրդը բաղկացած է 46 պատգամավորից: Շվեյցարական խորհրդարանի գործունեության կազմակերպման տարբերակիչ առանձնահատկությունը դրա նստաշրջանային աշխատակարգն է: Իշխանության օրենսդիր մարմնի պալատները, որպես կանոն, առանձին են գումարում իրենց նիստերը: Համատեղ նիստեր նախատեսված են միայն որոշ հարցեր քննարկելիս՝ պաշտոնատար անձանց նշանակում, իշխանության բարձրագույն դաշնային մարմինների իրավասության մասին վեճերի լուծում, համաներման մասին որոշում և հայտարարությունների ընդունում: Խորհրդարանականների սահմանադրական կարգավիճակի կարևոր տարր է նրանց պարտավորությունը հրապարակելու շահերի խմբերի հետ իրենց ունեցած կապերի մասին տեղեկություններ: Դրանով Շվեյցարիայի Սահմանադրությունն ամրապնդում է լոբբինգի կանոնակարգումը խորհրդարանում: Խորհրդարանի պալատներից մեկի անդամի կարգավիճակը համատեղելի չէ մյուս պալատի անդամի, ինչպես նաև Դաշնային խորհրդի և Դաշնային դատարանի անդամի կարգավիճակի հետ: Շվեյցարիայի Դաշնային ժողովի իրավասությունը կարելի է բնութագրել որպես հարաբերականորեն որոշակի, քանի որ, համաձայն Հիմնական օրենքի տեքստի, խորհրդարանը որոշումներ է ընդունում բոլոր հարցերի վերաբերյալ, որոնք դաշնային մյուս մարմինների իրավասությունից դուրս են:

Այդուհանդերձ, Դաշնային խորհրդի դերը ամրապնդում է սահմանադրական այն նորմը, ըստ որի՝ օրենքը կարող է վերապահել իրականացնելու նաև այլ լիազորություններ: Այդ դրույթը, համակցելով այն նորմի հետ, ըստ որի՝ «Դաշնային ժողովը օժտված է բարձրագույն իշխանությամբ», իրականացնում է բարձրագույն հսկողություն դաշնային մարմինների նկատմամբ, դարձնելով նրան գերակա բոլոր պետական մարմինների նկատմամբ:

Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի հիմնական մոդելների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում իշխանության կառուցվածքն ունի իր յուրահատկությունները, քանի որ հարմարեցված է սոցիալ-քաղաքական պայմաններին՝ յուրաքանչյուր որոշակի դեպքում: Դրա հետ մեկտեղ՝ պետք է նշել, որ պառլամենտարիզմը համընդհանուր կերպով հենվում է սահմանադրական այն դրույթների վրա, որոնք ամրագրում են իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների մեխանիզմները, տարատեսակ քաղաքական կուսակցությունների գործունեության ազատությունը: Միևնույն ժամանակ, նշյալ քաղաքական ինստիտուտը չի կարող արդյունավետ գործել, եթե ձևավորված չեն սոցիալական կառուցվածքն ու քաղաքացիական հասարակությունը, որոնց բնորոշ է բնակչության բարձր իրավաքաղաքական մշակույթը: Պառլամենտը խորհրդանշում և իրականացնում

է ազգ-պետության, կամ որ նույնն է, ազգապետության քաղաքական ներկայացուցչությունը, ընդունում է պետության գլխի երդումը, ինքնիշխան ժողովրդի կողմից արտահայտում է վստահությունը կառավարությանը և նրան հանձնում լիազորությունները, անում է հայտարարություններ միջազգային և ներքաղաքական հարցերի վերաբերյալ և այլն:

Խորհրդարանի իրավասությունը կարելի է դիտարկել ավելի մանրամասնորեն, սակայն, կսահմանափակվենք օրենսդրական և վերահսկողական գործառույթների շրջանակներով:

Խորհրդարանը երկրի հիմնական կամ նույնիսկ միակ օրենսդիր մարմինն է: Պաշտոնապես օրենք է կոչվում խորհրդարանի ընդունած ակտը, որն ընդունված է հատուկ ընթացակարգի համաձայն և պատշաճ ձևով դրված է գործողության մեջ: Հենց օրենսդրական գործառույթ իրականացնելն է հնարավորություն ընձեռում խորհրդարանին զգալի ազդեցություն գործելու քաղաքական կյանքի բոլոր կողմերի վրա: Խորհրդարանական գործունեության հիմնական արդյունքը օրենքն է, որը թե՛ բարոյափիլիսոփայական, թե՛ իրավաքաղաքական առումներով առավել հեղինակավոր նորմատիվային ակտն է: Օրենքներում ներառվող իրավական նորմերը կարգավորում են հասարակական հարաբերությունները, որոնց իրավական կանոնակարգումը պայմանավորված է սահմանադրությամբ (Հիմնական օրենքով), որոնք, սակայն, անմիջականորեն դրանով չեն կարգավորվում: Անգամ այն դեպքերում, երբ խորհրդարանն իր օրենսդրական լիազորությունները պատվիրակում է կառավարությանը, վերջինիս ընդունած ակտերը ենթակա են որոշակի ժամկետներում ներկայացուցչական մարմնի հաստատմանը, այլապես կորցնում են իրենց ուժը:

Օրենսդրական ընթացակարգը բաղկացած է մի քանի փուլից: Այն սկսվում է օրենսդրական նախաձեռնության կարգով օրինագիծ ներկայացնելուց: Այդ իրավունքով օժտված են սովորաբար խորհրդարանականներն ու կառավարությունը (վարչապետը), երբեմն պետության գլուխը (Ֆրանսիա) և այլք: Գործնականում աշխարհի երկրների մեծ մասում օրինագծերի գերակշիռ բաժինը ներկայացնում է կառավարությունը, և հենց դրանց է տրվում առաջնայնությունը քննարկումների ժամանակ: Արևմտյան երկրների մեծ մասում դեռ մինչև օրենքը վերջնականորեն ընդունելը որոշվում է, թե ով և ինչպես է այն կատարելու, որքան է այն «արժենալու», ինչ չափով պետք է ավելացնել պետական ծառայողների հաստիքները՝ օրենքի արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Պարադոքսն այն է, որ այդտեղ հաշվարկների սխալմունք է լինում, և ենթաօրենսդրական ակտերը ևս, մշակում են պետական պաշտոնյաները: Այդ ամենը հանգեցնում է նրան, որ առանձին պատգամավորների օրենսդրական առաջարկները շատ երկար են սպասում իրենց հերթին և ընդունվում են շատ հազվադեպ: Պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունները հաճախ չեն հաղթահարում անգամ նախնական գնահատականը, որը տալիս են կառավարությունը, պետական գերատեսչությունները կամ հետազոտական ինստիտուտները, ինչը բացատրվում է անհատ պատգամավորի ունեցած տեղեկատվության պակասով, պարզապես անիրագրելիությամբ:

Համապատասխան օրինագծերը, որպես կանոն, պատրաստում են շահագրգիռ կազմակերպությունները, և դրանք ներկայացվում են կառավարությունում կամ, ինչպես Մեծ Բրիտանիայում է, նախարարների կաբինետի օրենսդրության հարցերով կոմիտեում քննարկվելուց հետո: Խորհրդարանի գործառույթը ոչ այնքան օրինաստեղծումն է, որքան արդեն գոյություն ունեցող օրենքները քննարկելը: Նախարարները սահմանում են օրինագծերի ընդհանուր սկզբունքները, որոնք մշակում են իրավաբանները, ովքեր առաջնորդվում են պաշտոնյաներից ստացած հրահանգներով՝ ձևակերպելով նախարարի մտադրությունները:

րը: Խորհրդարանական քննարկումների ձևաչափը ստիպում է նախարարին ամենայն մանրամասնությամբ բացատրել և պաշտպանել իր մտահղացումը: Տեսականորեն հնարավոր է, որ կառավարության օրինագիծը, որը քննադատության է արժանանում խորհրդարանում, էականորեն ձևափոխվի կամ նույնիսկ ետ կանչվի, թեև գործնականում նման դեպքերը քիչ են: Հասարակությանն օրենքները ներկայացվում են որպես խորհրդարանական ակտեր, սակայն արդարության համար ճիշտ կլինի դրանց վրա փակցնել «Պատրաստված է Ռայթհոլում» պիտակը⁵:

Ժողովրդավարական երկրներում կառավարության դերի մասին օրինաստեղծման այս փուլում կարելի է դատել հետևյալ տվյալներով: Ժողովրդավարական 69 երկրներից 33-ում կառավարությունները ներկայացնում են օրինագծերի 90-100 տոկոսը, ևս 22-ում՝ ավելի քան 50 տոկոսը: Խորհրդարանում բացառիկ բարձր է կառավարության ներկայացրած օրինագծերի ընդունման արդյունավետությունը: 69 երկրներից 42-ում խորհրդարանները հավանություն են տալիս օրինագծերի 90-100 տոկոսին, 9-ում՝ 80-89 տոկոսին, և 4-ում՝ 70-79 տոկոսին:

ԱՄՆ-ում, որտեղ վարչակազմը օժտված չէ օրենսդրական նախաձեռնության իրավունքով, կառավարության օրենսդրական գործունեության ծրագիրը շարադրվում է ԱՄՆ Կոնգրեսին Նախագահի ամենամյա ուղերձներում, իսկ անհրաժեշտ օրինագծերը ներկայացվում են վարչակազմին մոտ կանգնած կոնգրեսականների միջոցով:

Օրինագծի քննարկումը: Օրինաստեղծ գործընթացի երկրորդ շրջափուլը՝ օրինագծի քննարկումը, տեղի է ունենում լիազումար նիստերում և խորհրդարանի հանձնաժողովներում կամ կոմիտեներում: Քննարկման ընդունված օրինագիծը, որպես կանոն, ուղարկվում է դրա բնույթին համապատասխանող մշտական հանձնաժողով, որը սովորաբար պատրաստում և ներկայացնում է իր զեկույցը պալատի լիազումար նիստին: Ինչպես հանձնաժողովում, այնպես էլ պալատներում քննարկումների ժամանակ օրինագծում կարող են կատարվել փոփոխություններ ու լրացումներ: Որոշ հետազոտողների կարծիքով, պատգամավորների մասնակցության իմաստը օրենսդրական աշխատանքին «ոչ այնքան օրենքներ մշակելն է, որքան դրանք քննարկելը»: Խորհրդարանականները բանակցողներն են: Նրանք քննարկում և ուղղում են օրենքները, արտահայտելով տարբեր շահեր՝ ընտրողների, արտադրողների, սպառողների, հարկատուների տարբեր խմբերի շահերը: Պայմանավորված այն բանով, թե ինչ դեր են տանում հանձնաժողովներն ու կոմիտեները օրինագծերը քննարկելիս, խորհրդարանները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբին դասվում են այն խորհրդարանները, որոնց հանձնաժողովներն ու կոմիտեները գտնվում են դրանց մշտական հսկողության ներքո: Խորհրդարանը քննարկում է օրինագիծը՝ սահմանելով դրա հիմնական սկզբունքներն ու դրույթները: Հանձնաժողովների ու կոմիտեների հայեցողությանը մնում է հիմնականում նախագծի տեքստի, դրա մանրամասների և առանձին հոդվածների խմբագրական լրամշակումը: Միջխորհրդարանական միության գնահատականներով՝ այդպես է ծավալվում խորհրդարանական գործունեությունը 36 պետություններում, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Կանադայում:

Երկրորդ խմբին է դասվում նաև Իտալիայի խորհրդարանը, սակայն, նա առանձնանում է այն բանով, որ այդ երկրի սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն, դրա հանձնաժողովներին է վերապահված ոչ միայն լրամշակման, այլև պալատների որոշման դեպ-

⁵ Այդ մասին ավելի մանրամասն տես *Алмонд Г., Пауель Дж., Стром К., Далтон П., Сравнительная политология сегодня. Мировой обзор*, с. 319-320.

քում օրինագծերը վերջնականորեն հաստատելու իրավունքը (բացի օրինագծերից, որոնք վերաբերում են ընտրական իրավունքի փոփոխությանը, հարկահավաքությանը, պետական միջոցների ծախսերին, միջազգային պայմանագրերի վավերացմանը և օրենսդրության պատվիրակմանը)⁶:

Որոշ խորհրդարաններում, օրինակ Դանիայում, Գերմանիայում, Իսլանդիայում, պալատներն իրենք են որոշում, թե որ մոդելը կիրառեն այս կամ այն օրինագիծը քննարկելիս: Մոդելներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, սակայն ինչպես վկայում է խորհրդարանական գործունեության փորձը, այն խորհրդարանները, որոնք օժտել են իրենց հանձնաժողովներին (կոմիտեներին) մեծ իրավունքներով, որպես կանոն, ավելի անկախ են գործադիր իշխանությունից: Մասնավորապես, օրինագծի հիմնական սկզբունքները քննարկելիս խորհրդարանը հաճախ է մերժում կառավարության առաջարկությունները՝ հենվելով այն փաստաթղթերի վրա, որոնք իրեն ներկայացնում են իր մասնագիտացված մարմինները: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ հանձնաժողովներում և կոմիտեներում քննարկումներից հետո խորհրդարանը հանգամանալից քննարկում է վերամշակված օրինագիծը, ինչը նպաստում է ժամանակ խնայելուն և աշխատանքի կազմակերպումը բարելավելուն:

Որպես կանոն՝ հանձնաժողովներում և կոմիտեներում նախագծի քննարկումը չի կանոնակարգվում նույնքան խիստ, որքան պալատում: Պատգամավորները կարող են ելույթ ունենալ բազմիցս, ազատորեն քննարկման ու քվեարկության դնել այս կամ այն հարցը: Հանձնաժողովների և կոմիտեների անհամեմատ մեծ հնարավորությունները՝ հետազոտելու նյութերը, լսելու վկաներին, փորձագետներին, ապահովում են ավելի խորը, ավելի մասնագիտական աշխատանք օրինագծի վրա, քան դա կարող էր իրականացվել խորհրդարանի լիազուրկ նիստում:

Օրենսդրական գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունի հանձնաժողովի կամ կոմիտեի զեկույցը, որը տարածվում է պատգամավորների շրջանում՝ օրինագծի տեքստի հետ: Որպես կանոն, դրանում ներառվում են առանձին պատգամավորների հատուկ կարծիքները, ինչը հնարավորություն է ընձեռում խորհրդարանին՝ ոչ միայն քննարկել տարբեր տեսակետներ, այլև քննարկելիս կախված չլինել մեծամասնության դիրքորոշումից:

Որոշ խորհրդարանների կանոնակարգերը հատուկ պահանջներ են սահմանում հանձնաժողովների ու կոմիտեների զեկույցների բովանդակության համար: Օրինակ՝ ԱՄՆ-ում մշտական կոմիտեների զեկույցներում պետք է ներառվեն ոչ միայն օրինագիծը և դրա լրամշակումների տեքստը ընդունելու կամ մերժելու մասին հանձնարարականները, այլև հնարավոր բյուջետային ծախսերի վերլուծությունը, դրա գործողությանը ենթակա ձեռնարկությունների կամ անձանց ընդհանուր թիվը, քաղաքացիների անձնական կյանքի վրա դրանց ազդեցության տնտեսական հետևանքները:

Պալատում օրինագծի քննարկումը կոչվում է «ընթերցում»: Միջխորհրդարանական միության տվյալներով 83 երկրներից 30-ում տեղի են ունենում մեկ, 18-ում՝ երկու և 35-ում՝ երեք ընթերցում: Որոշ խորհրդարաններում (Ճապոնիա, Բրազիլիա) տեղի է ունենում մեկ ընթերցում, որի ընթացքում լսվում է կոմիտեի կամ հանձնաժողովի զեկույցը, կառավարության ուղերձը, կազմակերպվում են ընդհանուր քննարկումներ հայեցակարգի, իսկ հետո օրինագծերի առանձին հոդվածների վերաբերյալ: Այդ դեպքում օրինագծի քննարկումը

⁶ Парламентаризм в странах зарубежной демократии. Реферативный сборник (зарубежная литература), Минск, 1990, с. 100-150.

ընթանում է մի քանի հաջորդական փուլերով:

Մի շարք երկրներում օրինագիծն անցնում է երկու ընթերցմամբ, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի գործառական նշանակություն: Որպես կանոն, առաջին ընթերցումը ներառում է հայեցակարգի վերաբերյալ քննարկումները, երկրորդը՝ օրինագծի առանձին հոդվածների վերաբերյալ: Այս կանոնից բացառություն է Ֆրանսիայի և Նիդեռլանդների խորհրդարանական պրակտիկան, որտեղ երկրորդ ընթերցումն անցկացվում է հիմնականում առաջին ընթերցման ժամանակ թույլ տրված տեխնիկական անճշտությունները վերացնելու համար:

Ամենատարածվածը երեք ընթերցումով օրինագծերը քննարկելն է (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Գերմանիա): Առաջին ընթերցումը որպես կանոն, նվիրվում է հայեցակարգը քննարկելուն, երկրորդը՝ առանձին հոդվածներ մանրամասնորեն մշակելուն, և երրորդը՝ ընդհանուր առմամբ օրինագծին:

Օրինագիծը մի շարք ընթերցումներով անցկացնելը հնարավորություն է տալիս հանգամանորեն հետազոտելու այն և ավելի լավ կազմակերպելու խորհրդարանի աշխատանքը: Այս առումով պակաս նշանակություն չունի այն հանգամանքը, որ ընթերցումները, ընդհանուր կանոնի համաձայն, անցկացվում են տարբեր օրերի և պատգամավորները հնարավորություն և ժամանակ ունեն դրանցից յուրաքանչյուրին պատրաստվելու:

Օրինագծի համար վճռորոշ նշանակություն ունի այն խորհրդարանի օրակարգում ներառելու կարգը: Ավելի քան 10 պետությունում այդ հարցի լուծումը վերապահված է գործադիր իշխանությանը: Այսպես, Իռլանդիայում խորհրդարանի աշխատանքի օրակարգը և կառավարության օրինագծերի քննարկման ընթացակարգը սահմանում է կառավարությունը: Փաստացի համանման հնարավորություններ ունեն Մեծ Բրիտանիայի, Կանադայի, կառավարությունները:

Այլ պետություններում օրակարգն ու օրինագծերի քննարկման կարգը սահմանում են հենց խորհրդարանները:

Շատ երկրներում օրինագծերի քննարկման ընթացակարգը սահմանելու իրավունքը վերապահված է հատուկ մարմինների: Ֆրանսիայում, Շվեդիայում, Ավստրիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում, Պորտուգալիայում դա իրականացնում են հատուկ հանձնաժողովները, որոնց կազմում ընդգրկված են պալատների նախագահները և կոմիտեների նախագահները կամ խորհրդարանական խմբակցությունների ղեկավարները: ԱՄՆ-ում Ներկայացուցիչների պալատում օրինագծերի քննարկման կարգը սահմանում է կանոնների հատուկ կոմիտեն, իսկ Գերմանիայի Բունդեստագում՝ ավագների խորհուրդը:

Օրինագծերի քննարկման կարգի և հաջորդականության մասին հարցը որոշելիս պետք է գտնվեն լուծումներ, որոնք պատշաճ կերպով հաշվի առնեն մի կողմից՝ խորհրդարանի ու գործադիր իշխանության շահերը, մյուս կողմից՝ պատգամավորների տարբեր խմբերի շահերը:

Գործադիր իշխանության շահերն ապահովելու հարցում սովորաբար բարդություններ չեն առաջանում: Խորհրդարանական պետություններում կառավարությունները փաստացի թելադրում են խորհրդարանին աշխատելու կարգը: Բավականաչափ մեծ են նաև կառավարման այլ ձև ունեցող երկրների կառավարությունների հնարավորությունները: Մասնավորապես, դրանցից շատերում կառավարության օրինագծերը քննարկման են դրվում արտահերթ: Հաճախ վարչակազմի ներկայացուցիչներն ընդգրկվում են այն մարմինների կազմում, որոնք պլանավորում են խորհրդարանի աշխատանքը (Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա և այլն):

Անհատ պատգամավորների կամ ընդդիմադիր խմբակցությունների կողմից ներկայացված օրինագծերը քննարկելու համար ավելի արդյունավետ է հատուկ օրեր կամ ժամեր առանձնացնելը: Այսպես, Կանադայում այդ նպատակի համար առանձնացվում է մեկ օր, Իռլանդիայում՝ 3 ժամ: Առավել լիարժեքորեն փոքրամասնությունների իրավունքների երաշխիքն ապահովվում է Մեծ Բրիտանիայի խորհրդարանական գործունեության ընթացքում: Ընդդիմադիր խմբակցությունների առաջարկած հարցերը քննարկելու համար Համայնքների պալատում նստաշրջանի ընթացքում հատկացվում է 20 օր: Դրանցից 17-ը՝ օրինագծերը ընդդիմադիր ամենամեծ խմբակցության ղեկավարի, և 3 օր՝ մեծությամբ երկրորդ ընդդիմադիր խմբակցության ղեկավարի սահմանած կարգով քննարկելու համար: Եվս 10 օր նստաշրջանի ընթացքում նվիրվում է անհատ պատգամավորների ներկայացրած օրինագծերի քննարկմանը:

Օրինագծերի քննարկումը պալատում հնարավորություն է տալիս հստակեցնելու տարբեր տեսակետները և արդեն այդ փուլում բացահայտելու, թե ինչ խոչընդոտների կհանդիպի օրինագիծը քննարկելիս: Օրենք ընդունելն ինքնանպատակ չէ: Գլխավորն այն է, որ օրենքն ապահովի հասարակական հարաբերությունների գործունե կարգավորում: Եվ օրենքների ճակատագիրը դրանք կիրառելիս մեծ չափով կախված է այն բանից, թե ինչպես են կազմակերպվում օրինագծերի քննարկումները պալատում, ինչ իրավունքներով են օժտված պատգամավորները, ինչ եղանակով են մշակվում փոխզիջումային որոշումները:

Քննարկումների ժամանակ պատգամավորները կարող են արտահայտվել ոչ միայն օրինագծի վերաբերյալ ընդհանրապես, այլև տեքստում իրենց կարծիքով անհրաժեշտ փոփոխությունների առաջարկներ անելիս:

Որպես կանոն՝ փոփոխությունները պետք է ներկայացվեն գրավոր, ընդ որում, հաճախ, ինչպես Ֆրանսիայում և Նիդեռլանդներում, հատուկ հիմնավորմամբ: Քննարկումների ժամանակ պատգամավորները կարող են առաջարկել դրանք նաև բանավոր, սակայն, այդ դեպքում օրինագծի քննարկումը հանձնաժողովներում ու կոմիտեներում կարող է ընդհատվել՝ փոփոխություններն ավելի մանրամասնորեն հետազոտելու համար: Նման իրավիճակից խուսափելու նպատակով կանոնակարգերը հաճախ սահմանում են փոփոխությունները ներկայացնելու վերջնաժամկետներ: Այսպես, Կանադայում, Դանիայում, Իտալիայում օրինագծի փոփոխությունները պետք է ներկայացվեն առնվազն մեկ օրում; Իռլանդիայում և Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում՝ ոչ ուշ, քան պալատում օրինագիծը քննարկելուց երկու օր առաջ: Էլ ավելի խիստ պահանջներ են սահմանված Ֆրանսիայի խորհրդարանական պրակտիկայում: Այստեղ օրենսդրական փոփոխությունները կարող են ներկայացվել միայն հանձնաժողովի զեկույցը հրապարակվելուց հետո առաջին չորս օրերին;

Այն խորհրդարաններում, որոնցում օրինագիծ ներկայացնել կարելի է որոշակի թվով պատգամավորների կողմից, որպես կանոն, նույն կերպ է լուծվում օրենքում փոփոխություններ կատարելու հարցը: Օրինակ՝ Ֆինլանդիայում փոփոխություններ կարող են ներկայացվել առնվազն երկու, իսկ Բելգիայում՝ հինգ պատգամավորի անունից:

Ընդհանուր առմամբ, փոփոխությունները կարելի է քննարկման դնել օրինագծի վերաբերյալ քվեարկությունից առաջ ցանկացած փուլում: Օրինակ՝ Նորվեգիայում օրինագծի փոփոխություններն ու լրացումները պետք է առաջարկվեն միայն մինչև առաջին ընթերցումը:

Բավական մեծ թվով պահանջներ են ներկայացվում նաև փոփոխությունների բովանդակությանը: Մի շարք խորհրդարաններում (Մեծ Բրիտանիա, Կանադա) արգելված է

կատարել փոփոխություններ, որոնք հակասում են այն հիմնական սկզբունքներին, որոնք սահմանվել են օրինագծի նախընթաց քննարկումներում: ԱՄՆ-ում, Հունաստանում թույլատրելի չեն ընդհանուր առմամբ օրինագծին չհամապատասխանող փոփոխությունները: Զգալիորեն սահմանափակված են պատգամավորների իրավունքները նաև ֆինանսական օրինագծերում լրացումներ ու փոփոխություններ կատարելու առումով: Առանձին դեպքերում դա թույլատրվում է միայն կառավարության համաձայնությամբ կամ խորհրդարանի համապատասխան հանձնաժողովի կամ կոմիտեի նախաձեռնությամբ:

Մտքերի փոխանակությունը կազմակերպելու համար էական նշանակություն ունի փոփոխությունների քննարկման կարգը: Խորհրդարանական առօրյայում այդ հարցը լուծվում է տարբեր կերպ: Լիխտենշտեյնում փոփոխությունները քննարկվում են այն հաջորդականությամբ, որով ներկայացվել են: Բելգիայում, Բրազիլիայում, Կանադայում և Հնդկաստանում՝ օրինագծի հոդվածների քննարկման հաջորդականությամբ: Մեծ Բրիտանիայում առաջին հերթին քննարկվում են երկրորդական փոփոխությունները: Շատ երկրներում, ներառյալ ԱՄՆ-ը և Ֆրանսիան, առաջնահերթությունը տրվում է հանձնաժողովների ու կոմիտեների առաջարկներին:

Մտքերի փոխանակության ընթացքում խորհրդարանը պետք է լուծի երկու հիմնական խնդիր՝ վեր հանի տարբեր տեսակետներ և մշակի փոխգիծումային լուծումներ, որոնք կբավարարեն պատգամավորների մեծ մասին: Այդ դեպքում շատ բան կախված է նրանից, թե ինչպես են ապահովվում խորհրդարանի անդամների իրավունքներն ու հնարավորությունները:

Եզրակացություն

Արևմտեվրոպական պետությունների մեծ մասը դասվում է խորհրդարանական կառավարման մոդելին, մինչդեռ ԱՄՆ-ում հաստատված է նախագահական հանրապետության ձևը:

Նախագահական և խորհրդարանական մոդելների համադրությամբ կարելի է արձանագրել մի շարք սկզբունքային տարբերություններ:

Իշխանության ձևավորման ձևը.

ԱՄՆ-ում նախագահն ու Կոնգրեսի կազմը ընտրվում են առանձին ընտրությունների միջոցով: Իսկ խորհրդարանական համակարգում ընտրությունները միաժամանակ որոշում են և՛ խորհրդարանի, և՛ կառավարության ձևավորման հարցը, ինչն ակտուալ է նաև կոալիցիաների ձևավորման տեսանկյունից:

Կառավարության ձևավորում և վերահսկողություն.

Խորհրդարանական համակարգում կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի կողմից և ենթակա է դրա վերահսկողությանը. խորհրդարանն ունի այն ցրելու հնարավորություն: Ամերիկյան Կոնգրեսը, սակայն, նման լիազորություն չունի և չի կարող պաշտոնանկ անել նախագահին՝ քաղաքական տարակարծությունների կամ մեծամասնության փոփոխության հիմքով: Միայն բացառիկ դեպքերում, երբ նախագահը մեղադրվում է ծանր հանցագործության մեջ (օրինակ՝ դավաճանություն, կաշառք, այլ լուրջ իրավախախտումներ), Ներկայացուցիչների պալատը կարող է մեղադրանք առաջադրել, որը, Սենատի կողմից երկու երրորդ ձայներով հաստատվելու դեպքում, կարող է հանգեցնել նախագահի պաշտոնանկությանը:

Օրենսդիր մարմնի նկատմամբ վերահսկողության միջոցներ.

ԱՄՆ նախագահը չունի իրավասություն լուծարել Կոնգրեսը և նշանակել նոր ընտրություններ: Սա արմատապես տարբերվում է խորհրդարանական համակարգից, որտեղ օրինակ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետը կարող է լուծարել Համայնքների պալատը և նախաձեռնել նոր ընտրություններ:

Իշխանության բաժանման ձևը.

Մեծ Բրիտանիայի խորհրդարանական համակարգում վարչապետը, որպես կանոն, խորհրդարանի անդամ է: ԱՄՆ Սահմանադրությունը բացառում է գործադիր պաշտոնի և օրենսդիր մարմնի անդամության համատեղումը: Նախագահն ու նրա կաբինետի անդամները չեն կարող միաժամանակ լինել Կոնգրեսի անդամներ: Միակ բացառությունն այն է, որ փոխնախագահը հանդիսանում է Սենատի նախագահ:

Պետության ղեկավարի և կառավարության ղեկավարի դերի տարանջատում.

Խորհրդարանական համակարգում պետության ներկայացուցչական դերը սովորաբար կատարում է նախագահը կամ միապետը, մինչդեռ իրական գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարության ղեկավարն՝ օրինակ՝ վարչապետը կամ կանցլերը: ԱՄՆ-ում այդ դերերը միավորված են մեկ անձի՝ նախագահի մոտ, որը միաժամանակ հանդիսանում է և՛ պետության, և՛ կառավարության ղեկավար:

Օրենսդրական գործընթացում մասնակցությունը.

ԱՄՆ նախագահը ֆորմալ առումով զուրկ է օրենսդրական նախաձեռնության իրավունքից: Նա միայն կարող է վետո դնել Կոնգրեսի ընդունած օրինագծերի վրա: Այս վետոն կարող է հաղթահարվել՝ Կոնգրեսի երկու պալատներում համապատասխան օրինագծին տալով երկու երրորդ ձայների աջակցություն: Ի տարբերություն դրա, խորհրդարանական համակարգում կառավարությունն ունի օրենսդրական նախաձեռնության լայն հնարավորություն, իսկ որոշ դեպքերում նաև լիակատար վետոյի իրավունք՝ ներկայացված օրենքների նկատմամբ (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում):

Շարունակելի.....

Ամփոփագիր: Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի հիմնական մոդելների և զարգացման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում իշխանության կառուցվածքն ունի իր յուրահատկությունները, քանի որ հարմարեցված է սոցիալ-քաղաքական պայմաններին՝ յուրաքանչյուր որոշակի դեպքում: Դրա հետ մեկտեղ՝ պետք է նշել, որ պառլամենտարիզմը համընդհանուր կերպով հենվում է սահմանադրական այն դրույթների վրա, որոնք ամրագրում են իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների մեխանիզմները, տարատեսակ քաղաքական կուսակցությունների գործունեության ազատությունը: Միևնույն ժամանակ, նշյալ քաղաքական ինստիտուտը չի կարող արդյունավետ գործել, եթե ձևավորված չեն սոցիալական կառուցվածքն ու քաղաքացիական հասարակությունը, որոնց բնորոշ է բնակչության բարձր իրավաքաղաքական մշակույթը: Պառլամենտը խորհրդանշում և իրականացնում է ազգ- պետության, կամ որ նույնն է, ազգապետության քաղաքական ներկայացուցչությունը, ընդունում է պետության գլխի երդումը, ինքնիշխան ժողովրդի կողմից արտահայտում է վստահությունը կառավարությանը և նրան հանձնում լիազորությունները, անում է հայտարարություններ միջազգային և ներքաղաքական հարցերի վերաբերյալ և այլն:

Հոդվածի հեղինակը գտնում է, որ հենց ներկայացուցչական ու գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն են դրված սույն հոդվածի մյուս բաժիններում ներկայացվելիք՝ գերիշխող, ինքնավար, սահմանափակ իրավասությամբ, ինչպես նաև ենթակա խորհրդարանների դասակարգման հիմքում:

Annotation. Analysis of the main models of Western European parliamentarism and the practice of their development shows that the structure of power in them has its own characteristics, since it is adapted to the socio-political conditions in each specific case. At the same time, it should be noted that parliamentarism is universally based on those constitutional provisions that enshrine the principle of separation of powers, mechanisms of checks and balances, freedom of activity of various political parties. At the same time, this political institution cannot function effectively if a social structure and civil society characterized by a high legal and political culture of the population are not formed. The parliament symbolizes and implements the political representation of the national state or, what is the same, the nation-state, accepts the oath of the head of state, expresses confidence in the government on behalf of the sovereign people and transfers powers to it; makes statements on international and domestic political issues; etc. The author of the article believes that it is the specifics of the relationship between the representative and executive powers that form the basis of the classification of parliaments (chambers) presented in this article: dominant, autonomous, with limited jurisdiction, and subordinate.

Аннотация. Анализ основных моделей западноевропейского парламентаризма и практики их развития показывает, что структура власти в них имеет свои особенности, поскольку она адаптирована к социально-политическим условиям в каждом конкретном случае. В то же время следует отметить, что парламентаризм повсеместно базируется на тех конституционных положениях, которые закрепляют принцип разделения властей, механизмы сдержек и противовесов, свободу деятельности различных политических партий. Вместе с тем указанный политический институт не может эффективно функционировать, если не сформированы социальная структура и гражданское общество, характеризующиеся высокой правовой и политической культурой населения. Парламент символизирует и реализует политическое представительство национального государства или, что то же самое, нации-государства, принимает присягу главы государства, выражает доверие правительству от имени суверенного народа и передает ему полномочия, выступает с заявлениями по международным и внутриполитическим вопросам и т. д. Автор статьи считает, что именно особенности взаимоотношений представительной и исполнительной власти положены в основу представленной в настоящей статье классификации парламентов (палат): главенствующие, автономные, с ограниченной юрисдикцией, а также подчиненные.

Բանալի բառեր - պետություն, Սահմանադրություն, քաղաքական կուսակցություններ, խորհրդարան, պալատներ, քաղաքական համակարգ, ժողովրդավարություն, կուսակցական համակարգ, սահմանադրական վերահսկողություն, քաղաքացիական հասարակություն, պալատամակրոներ, լոբբինգ:

Keywords: state, Constitution, political parties, parliament, parliamentarism, political system, democracy, party system, constitutional control, civil society, deputy, lobbying.

Ключевые слова: государство, Конституция, политические партии, парламент, парламентаризм, политическая система, демократия, партийная система, конституционный контроль, гражданское общество, депутат, лоббирование.

Օգտագործված գրականության ցանկ

1. Крылова Н.С., Британский парламент// очерки парламентского права. М., 1993.
2. Баренбойм Н.Д., Вето президента США - Советское государство и право. Москва, 1977.
3. Из истории европейского парламентаризма. Франция. Под ред. С.П.Пожарской. М., 1999.

4. Крутослов М.А., Ковлер А.И., Парламентское право Франции. - Очерки парламентского права. - М., 1993.
5. Рокар М., Трудиться с душой. - М., 1990.
6. Алмонд Г., Пауель Дж., Стром К., Далтон П., Сравнительная политология сегодня. Мировой обзор.
7. Парламентаризм в странах зарубежной демократии. Реферативный сборник (зарубежная литература), Минск, 1990.
8. Крылова Н.С., Британский парламент // Очерки парламентского права. М., 1993.

Մանուկյան Մ. - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիտորինգի պատասխանատու, Երևանի «Գլաժոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիստգե՝ martin_manukyan_1955@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 03.04.2025 թ., տրվել է գրախոսության 03.04.2025 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: